



Տեղեկատվության թարմացում

Այժմ կարող եք ներկայացնել հետվճարի դիմում՝ օգտվելով CDTFA-ի առցանց ծառայությունների հարթակից onlineservices.cdtfa.ca.gov/ հղումով:

Հետվճարի դիմում ներկայացնելու համար պարզապես մուտք գործեք ձեր մուտքանվամբ և գաղտնաբառով և բացեք այն հաշիվը, որի համար ցանկանում եք հետվճարի դիմում տալ: Հետվճարի դիմումի ձևը ներկայացված է «I Want To» բաժնի «More» ենթաբաժնում: Պարզապես անցեք «*Submit a Claim for Refund*» հղումով և հետևեք ցուցումներին:

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՏՈՒՐՔԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

(ցուցումները տե՛ս երկրորդ էջում)

| | |
|-----------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------|
| ՀԱՐԿ ԿԱՍ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂ(ՆԵՐ)Ի ԱՆՈՒՆ(ՆԵՐ)Ը | CDTFA-Ի ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ (յուրաքանչյուր դիմումի համար կշեղ միայն մեկ հաշվի համար) |
| ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՅՈՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ(ՆԵՐ)Ը* ԿԱՍ ԳՈՐԾԱՏՈՒԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԱՇՆԱՑԻՆ ՀԱՄԱՐԸ | ԳԼԽԱԿՈՐ ԳՈՐԾՆԿԵՐ(ՆԵՐ)Ը (եթե կիրառելի է) |
| ԲԻԶՆԵՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ (եթե կիրառելի է) | ԲԻԶՆԵՍԻ ԳՏԼՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ ՀԱՍՑԵՆ (եթե կիրառելի է) |
| ՓՈՍԱՑԻՆ ՀԱՍՑԵՆ (եթե կիրառելի է) | |

Ընտրեք հարկերի կամ վճարների այն ծրագիրը, որը կիրառելի է հետվճարի կամ ապառքի ձեր դիմումի համար:

- | | | |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <input type="checkbox"/> Իրացման և օգտագործման հարկ <input type="checkbox"/> Փայտանյութի հարկ <input type="checkbox"/> Բջջային կապի կանխավճարային ծառայությունների հավելավճար Եթե գնորդը ավտոմեքենայի կամ առանց փաստաթղթերի տրանսպորտային միջոցի օգտագործման հարկի գերավճար է կատարել Ավտոտրանսպորտային վարչությանը (DMV), խնդրում ենք լրացնել CDTFA-101-DMV ՝ «Հետվճարի կամ ապառքի դիմում Ավտոտրանսպորտային վարչությանը վճարած հարկի գծով» ձևը: | <input type="checkbox"/> Ալկոհոլային խմիչքների հարկ <input type="checkbox"/> Անվադողերի վճար Կալիֆորնիայում <input type="checkbox"/> Կանեփի հարկեր <input type="checkbox"/> Կապարից երեխաների թունավորումը կանխարգելելու վճար <input type="checkbox"/> Ծխախոտի և ծխախոտային ապրանքների հարկ <input type="checkbox"/> Փակ էլեկտրոնային թափոնների վերամշակման վճար <input type="checkbox"/> Դիզվառելիքի հարկ <input type="checkbox"/> Արտակարգ իրավիճակում հեռախոսից օգտվողների հավելավճար <input type="checkbox"/> Էներգետիկ ռեսուրսների (էլեկտրական) հավելավճար | <input type="checkbox"/> Հրդեհի կանխարգելման վճար <input type="checkbox"/> Վտանգավոր նյութերի հարկ <input type="checkbox"/> Թափոնների կառավարման միասնական վճար <input type="checkbox"/> Կապարաթթվային մարտկոցի վճար <input type="checkbox"/> Ջրային ռեսուրսներ ներթափանցող տեսակների վճար <input type="checkbox"/> Ավտոմեքենայի և ավիավառելիքի հարկեր <input type="checkbox"/> Բնական գազի հավելավճար <input type="checkbox"/> Աշխատավայրում կապարից թունավորումը կանխարգելելու վճար <input type="checkbox"/> Նավթի թափման կանխարգելման և վթարների կառավարման վճարներ <input type="checkbox"/> Տարածաշրջանային երկաթուղու վթարի պատրաստվածության և անհապաղ արձագանքման վճար <input type="checkbox"/> Ապահովագրողների հարկ <input type="checkbox"/> Փայտանյութի եկամտային հարկ <input type="checkbox"/> Ստորգետնյա ցիստեռնի պահպանման վճար <input type="checkbox"/> Վառելիքի ծախսի հարկ <input type="checkbox"/> Ջրօգտագործման իրավունքի հարկ |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|

Վերոնշյալ հարկերի/վճարների համար լրացված ձևն ուղարկեք հետևյալ փոստային հասցեով՝
 California Department of Tax and Fee Administration Audit Determination and Refund Section, MIC:39
 PO Box 942879
 Sacramento, CA 94279-0039

Կամ էլ փոստով՝
BTFD-ADRS@cdtfa.ca.gov

Վերոնշյալ հարկերի/վճարների համար լրացված ձևն ուղարկեք հետևյալ փոստային հասցեով՝
 California Department of Tax and Fee Administration Appeals and Data Analysis Branch, MIC:33
 PO Box 942879
 Sacramento, CA 94279-0033

Կամ էլ փոստով՝ adab@cdtfa.ca.gov

Ներքոստորագրյալը սույնով դիմում է որպես հարկ, տոկոս և տույժ հաշվարկված _____ ԱՄՆ դոլարի կամ նման այլ գումարների հետվճարի կամ ապառքի համար՝ կապված հետևյալի հետ.

- Հայտարարագիր(եր), որոնք ներկայացվել են _____ -ից մինչև _____ ժամանակահատվածի համար _____
- Որոշում(ներ)/հաշիվ(ներ), որոնք կազմվել են _____ ամսաթվին և վճարվել են _____ ամսաթվին _____
- Այլ (ամբողջությամբ նկարագրել)՝ _____

Հետվճարի հիմք (պարտադիր է)՝ _____

Ուղեկցող փաստաթղթեր՝ ներառյալ փոփոխված հայտարարագիր(եր)ը՝ կցված է կտրամադրվի պահանջվելու դեպքում

| | |
|-------------------|-------------------------------------|
| ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ԱՍՍԱԹԻՎ |
| ԱՆՈՒՆԸ ՏՊԱՏԱԹԵՐՈՎ | ԿՈՆՏԱԿՏԱՑԻՆ ԱՆՁ (եթե ստորագրողը չէ) |
| ԿՈՉՈՒՄ ԿԱՍ ՊԱՇՏՈՆ | ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ () |
| ԷԼ.ՓՈՍՏԻ ՀԱՍՑԵ | ԿՈՆՏԱԿՏԱՑԻՆ ԱՆՁԻ ԷԼ.ՓՈՍՏԻ ՀԱՍՑԵ |

*Կիրառելի սոցիալական ապահովության համարի օգտագործման կարգի վերաբերյալ տե՛ս [CDTFA-324-GEN](#)՝ «Շանուցում անձնական տեղեկությունների օգտագործման կարգի մասին» փաստաթուղթը:

ՑՈՒՑՈՒՆԵՐ ՅԵՏՎՃԱՐԻ ԴԻՄՈՒՄԻ ԼՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Յետվճարի կամ ապառքի դիմում ներկայացնելիս պետք է նշել դիմումին առնչվող ժամանակահատվածը, դիմումի ներկայացման որոշակի հիմքերը և տրամադրել դիմումին ուղեկցող փաստաթղթերը: Փաստաթղթերը պետք է ներառեն փոփոխված հայտարարագրերը, պարունակեն բավարար չափով մանրամասն տվյալներ և ապացուցեն, որ կա գերավճար: Փաստաթղթերը ներկայացրեք հետվճարի կամ ապառքի ձեռք դիմումի հետ միասին, իսկ եթե փաստաթղթերը ծավալուն են, պատրաստ ունեցեք դրանք՝ պահանջվելու դեպքում ներկայացնելու համար:

Ինչ է պետք իմանալ

- Դիմումը պետք է ներկայացնել հարկերի/վճարների տվյալ ծրագրի* համար օրենքով սահմանված ժամկետներում:
- Օրենքով սահմանված ժամկետների պահպանման համար հիմք է հանդիսանում ձեր դիմումի ներկայացման ամսաթիվը:
- Ներկայացման ամսաթիվ է համարվում փոստով առաքման (փոստային դրոշմակնիքի) ամսաթիվը, Էլեկտրոնային փոխանցման ամսաթիվը (երբ կիրառելի է) կամ այն ամսաթիվը, որին ձեր դիմումն անձամբ հանձնել էք Կալիֆորնիայի Յարկերի և տուրքերի վարչության (CDTFA) մոտակա գրասենյակին: Այդ ամսաթիվը կարող է ստորագրման ամսաթվից տարբեր լինել:
- Յուրաքանչյուր դիմումի ձևի համար կարող եք նշել միայն մեկ հաշիվ: Եթե հետվճարի դիմում եք ներկայացնում հարկերի/վճարների մի քանի ծրագրի համար, յուրաքանչյուր հաշվի համար անհրաժեշտ է առանձին ձև ներկայացնել:
- Եթե դիմում եք մասնակի կամ տարածամկետ վճարման հետվճարի համար, ձեր դիմումը կվերաբերի մեկ որոշման համար ընդունված բոլոր հետագա վճարումներին (մինչև 2017թ. հունվարի 1-ը յուրաքանչյուր մասնակի կամ տարածամկետ վճարման համար պահանջվում էր առանձին դիմում): Եթե ձեզ տրամադրվել են մեկից ավելի որոշումների ծանուցագրեր (որոշումներ), պետք է հետվճարի դիմում ներկայացնեք յուրաքանչյուր առանձին որոշման համար, որպեսզի տվյալ որոշման հետ կապված բոլոր հետագա վճարումներն ընդգրկվեն:

Դիմումի ներկայացման կարգը

- Ձեր մուտքանվամբ և գաղտնաբառով մուտք գործեք մեր կայք onlineservices.cdtfa.ca.gov/ հղումով: Բացեք այն հաշիվը, որի համար ցանկանում եք հետվճարի դիմում տալ և ընտրեք «More» հղումը «I Want To» բաժնի տակ: Այնուհետև անցեք «Submit a Claim for Refund» հղումով և հետևեք ցուցումներին:
- Դիմումն ուղարկեք առաջին Էջում նշված համապատասխան վայրին՝ համապատասխանաբար փոստով, Էլ.փոստով կամ ֆաքսով:
- Առձեռն հանձնեք CDTFA-ի ցանկացած գրասենյակում (CDTFA-ի գրասենյակների ցանկը տե՛ս մեր կայքում՝ www.cdtfa.ca.gov):

Չավելյալ տեղեկությունների համար

- Չանգահարեք մեր սպասարկման կենտրոնին 1-800-400-7115 (CRS:711) հեռախոսահամարով, որտեղից ձեզ կմիացնեն ձեր հարկային կամ վճարային հաշվի պատասխանատու գրասենյակի հետ:
- Տե՛ս [117-րդ հրապարակումը](#)՝ «Յետվճարի դիմումի ներկայացում»:
- Տե՛ս [17-րդ հրապարակումը](#)՝ «Բողոքարկման ընթացակարգեր. Իրացման և օգտագործման հարկեր և հատուկ հարկեր»:

Ինչպես լրացնել դիմումի ձևը

Յարկ վճարողի կամ վճար վճարողի անուն և հաշվի համար. մուտքագրեք CDTFA-ում գրանցված անուն(ներ)ը և հաշվի համարը: Եթե դիմումատուն գրանցված չէ CDTFA-ում, մուտքագրեք հետվճարի դիմումին ուղեկցող փաստաթղթերում նշված անուն(ներ)ը: Մի՛ մուտքագրեք բիզնեսի անվանումը, եթե այն CDTFA-ում գրանցված անունը չէ:

Սոցիալական ապահովության համար/Գործատուի նույնականացման դաշնային համար. կիրառելի սոցիալական ապահովության համար(ներ)ի տրամադրումը պարտադիր է (տե՛ս [CDTFA-324-GEN](#)՝ «Ծանուցում անձնական տեղեկությունների օգտագործման կարգի մասին»), նույնիսկ եթե դիմումատուն գրանցված չէ CDTFA-ում, քանի որ որոշ մակարդակներում հետվճարի կամ դրա մի մասի հետ կապված տեղեկությունները կարող են տրամադրվել Ներքին եկամուտների ծառայությանը: Եթե դիմումատուն ամուսնական զույգ է, մուտքագրեք և՛ ամուսնու, և՛ կնոջ սոցիալական ապահովության համարները: Եթե դիմումատուն գործընկերություն է, մուտքագրեք գլխավոր գործընկերոջ(գործընկերների) սոցիալական ապահովության համար(ներ)ը և գործընկերոջ անունը: Մյուս բոլոր իրավաբանական անձանց համար մուտքագրեք գործատուի նույնականացման դաշնային համարը:

Յետվճարի գումար. մուտքագրեք ձեր դիմումի գումարը:

Գերավճարի տեսակ. կատարեք նշում համապատասխան վանդակում, որպեսզի ցույց տաք, թե ձեր դիմումն ինչի համար է՝ հայտարարագրի ներկայացման վճարման, որոշման/հաշվի վճարման, թե այլ տեսակի գերավճարի համար, և մուտքագրեք կիրառելի ամսաթվերը: Եթե ընտրում եք «այլ», ամբողջությամբ բացատրեք ձեր դիմումի հանգամանքները:

Յետվճարի հիմքը. ներկայացրեք դիմումի հիմքը կամ հիմնավորումները կամ նկարագրեք գերավճարի առաջացման հանգամանքները: Յետվճարի դիմումները հաշվի չեն առնվի, եթե այս դաշտը լրացված չլինի:

Բիզնեսի անվանում. մուտքագրեք բիզնեսի անվանումը: Օրինակ, եթե դիմումատուի անունը Ջոն Դո է, իսկ բիզնեսի անվանումը՝ «XYZ ավտովերանորոգում», պետք է մուտքագրել «XYZ ավտովերանորոգում»:

Ստորագրություն և կոչում կամ պաշտոն. դիմումի ձևը պատրաստողը պետք է ստորագրի իր անունով: Պատրաստողը պետք է նշի նաև իր կոչումը կամ պաշտոնը (օրինակ՝ կրտսեր հաշվապահ, իրավական խորհրդատու, հաշվապահ, հարկ վճարող և այլն):

Ստորագրման ամսաթիվ. մուտքագրեք դիմումի ձևը ստորագրելու ամսաթիվը:

Կոնտակտային անձ (եթե ստորագրողը չէ). այս տողը կարելի է օգտագործել՝ նշելու այն անձին (ոչ ստորագրողին), որի հետ CDTFA-ն կապ կհաստատի, եթե հարցեր ունենա, կամ լրացուցիչ տեղեկատվություն պահանջվի: Այդպիսի անձինք կարող են լինել աշխատակիցները, խորհրդատուները, հաշվապահները, լիազոր ներկայացուցիչները և այլն, որոնց կնշանակի հարկ վճարողը կամ վճար վճարողը:

Յեռախոսահամար. նշեք ձեր հեռախոսահամարը (և կոնտակտային անձի հեռախոսահամարը, եթե կիրառելի է):

Էլ.փոստ. նշեք ձեր Էլ.փոստի հասցեն (և կոնտակտային անձի Էլ.փոստի հասցեն, եթե կիրառելի է):

*Յետվճարի դիմում ներկայացնելու ժամանակահատվածը տարբեր է՝ կախված մի շարք գործոններից, մասնավորապես գերավճարի տեսակից և այն հարկի կամ վճարի ծրագրից, որի համար հետվճարի դիմում եք ներկայացնում: Ուսումնասիրեք տվյալ հարկի կամ վճարի ծրագրի վերաբերյալ համապատասխան օրենքներն ու կանոնակարգերը, որի համար դիմում եք ներկայացնում: Կարող եք ուսումնասիրել նաև 117-րդ և 17-րդ հրապարակումները, որոնց հղումները բերված են վերևում: